ՀՖՖ ԱԿՈՒՄԲՆԵՐԻ ԱՐՏՈՆԱԳՐՄԱՆ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ 2019

2018/2019 ՄՐՑԱՇՐՋԱՆ

ՀՖՖ ԱԿՈՒՄԲՆԵՐԻ ԱՐՏՈՆԱԳՐՄԱՆ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ 2019

2018/2019 ՄՐՑԱՇՐՋԱՆ

ՀՖՖ Արտոնագրման բաժին
Օգոստոս 2019թ.

Հարգելի բարեկամ,

ՀՖՖ Արտոնագրման բաժինը Ձեզ է ներկայացնում ՀՖՖ ակումբների արտոնագրման համեմատական վերլուծության յոթերորդ հրատարակությունը 2018/2019 թվականների մրցաշրջանի և 2018 թվականի ֆինանսական տարվա վերաբերյալ: Այն ամբողջովին ներկայացնում է հայկական պրոֆեսիոնալ ակումբային ֆուտբոլը՝ իր մեջ ներառելով ՀՀ Բարձրագույն խմբի ակումբների մասին համեմատական կարգով մանրամասն տեղեկատվություն: Այս փաստաթուղթը հրատարակվում է յոթերորդ տարին անընդմեջ և շարունակում է հանդիսանալ ամենամյա սկզբունքով թողարկվող միակ փաստաթուղթը, որն իր մեջ պարունակում է հայկական ակումբների և հայկական ֆուտբոլի վերաբերյալ ֆինանսական, ենթակառուցվածքային, մարզչական, կադրային, իրավական և այլ կարևոր տեղեկատվություն:

Այս զեկույցն իր մեջ ներառում է 2018/2019 թվականների մրցաշրջանի և 2018 թվականի ֆինանսական տարվա ընթացքում հավաքագրված ողջ տեղեկատվությունը, որոնք ակումբները ներկայացրել են ՀՖՖ ակումբների արտոնագրման և վերահսկողության գործընթացի շրջանակներում: Զեկույցում նաև անդրադարձ է կատարվում 2019/2020 թվականների մրցաշրջանի արտոնագրման գործընթացին և արտոնագրային որոշումներին, քանի որ նշված մրցաշրջանի արտոնագրերն ակումբներին շնորհվել են 2018/2019 թվականների մրցաշրջանի ընթացքում:

Վերոնշյալ տեղեկատվությունը չէր լինի հասանելի, և ակումբների արտոնագրման համեմատական զեկույցը չէր դառնա իրականություն՝ առանց մեր ակումբների կողմից համապատասխան աջակցություն և պատրաստակամություն ցուցաբերելու: Այդ առումով մեր խորին շնորհակալությունն ենք հայտնում ՀՀ Բարձրագույն և Առաջին խմբերի բոլոր ակումբներին իրենց աջակցության և սույն զեկույցի կազմմանը մասնակցություն ցուցաբերելու համար:

Զեկույցում ներկայացված է նաև 2018թ.-ի սեպտեմբեր ամսից ի վեր ՀՖՖ նոր ղեկավարության կողմից մշակված և որդեգրված նոր երկարաժամկետ ռազմավարական ծրագրի շրջանակներում արդեն իսկ գրանցած մի շարք ձեռքբերումները, մասնավորապես՝ նոր ենթակառուցվածքների կառուցում, նոր համագործակցություններ և այլն:

Վստահ ենք, որ ՀՖՖ ակումբների արտոնագրման համեմատական վերլուծություն զեկույցը կոչված է բարձրացնելու և ավելացնելու հայկական ֆուտբոլում առկա թափանցիկության մակարդակը, ինչը հանդիսանում է ՀՖՖ քաղաքականության անկյունաքարերից մեկը:

Արթուր Ազարյան
ՀՖՖ Ակումբների արտոնագրման և վերահսկողության նախագծի ղեկավար

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԳԼՈՒԽ 1.	ԱՐՏՈՆԱԳՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ	**5**
ԳԼՈՒԽ 2.	ՀԱՃԱԽԵԼԻՈՒԹՅՈՒՆ	**11**
ԳԼՈՒԽ 3.	ՖՈՒՏԲՈԼԻՄՆԵՐ ԵՎ ԼԵԳԻՈՆԵՐՆԵՐ	**19**
ԳԼՈՒԽ 4.	ԵԿԱՄՈՒՏՆԵՐ ԵՎ ԾԱԽՍԵՐ	**25**
ԳԼՈՒԽ 5.	ՁԵՌՔԲԵՐՈՒՄՆԵՐ	**31**
ԳԼՈՒԽ 6.	ՍԵՄԻՆԱՐՆԵՐ ԵՎ ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ	**37**
ԳԼՈՒԽ 7.	ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՆԱԽԱԳԾԵՐ	**43**

ԳԼՈՒԽ 1. ԱՐՏՈՆԱԳՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ

Արտոնագրման գործընթաց

ՀՖՖ Ակումբների արտոնագրման համեմատական վերլուծությունը շարունակում է մնալ իր տեսակի մեջ հայկական ֆուտբոլին վերաբերող միակ ուսումնասիրությունը, մի կողմից հանդիսանալով ակումբային ֆուտբոլի ուղեցույցը, մյուս կողմից՝ կատարելով ժամանակակից ֆուտբոլի կարևոր միտումների արձանագրման և փաստաթղթավորման գործընթացը: Վերլուծությունը փաստերի հիման վրա ներկայացնում է անցնող մրցաշրջանում արձանագրված իրադարձությունները, որոնք և՛ դրական, և՛ բացասական միտում ունեն: ՀՖՖ Արտոնագրման բաժինը սույն վերլուծությունը կազմել է ՀՖՖ ակումբների կողմից ներկայացված արտոնագրման 5 չափանիշների (մարզական, կադրային և վարչական, իրավական, ենթակառուցվածքային և ֆինանսական) հիման վրա՝ պահպանելով անկախության և գաղտնիության պատշաճ մակարդակը:

Վերլուծության հիմնական առանցքն են կազմում նախորդ 15 մրցաշրջանների ընթացքում ՀՖՖ Ակումբների արտոնագրման գործընթացի մասին տեղեկատվությունը, կայացված որոշումների համեմատությունները՝ ըստ Ազգային և ՈՒԵՖԱ-ի արտոնագրման գործընթացների, մարզասերների՝ ներքին առաջնություններին խաղերի հաճախելիությունը, ՀՀ Բարձրագույն և Առաջին խմբերի հանդիպումներին մասնակցած ֆուտբոլիստների տարիքային առանձնահատկությունները, ինչպես նաև ակումբների ֆինանսական հաշվետվությունների վրա հիմնված տեղեկությունները եկամուտների ու ծախսերի մասին:

2019/2020 մրցաշրջանի Ազգային արտոնագիր ստանալու համար դիմել է 12 ակումբ: ՀՀ Բարձրագույն խմբի առաջնությանը հանդես գալու իրավունք տվող արտոնագիր ստացել է 10 ակումբ: Դիմորդ ակումբներից 2-ի՝ «Լոկոմոտիվ ՖԱ»-ի և «Յունիոր-Սևան ՖԱ»-ի արտոնագրերը մերժվել են:

Արտոնագրման կոմիտեն մերժել է «Լոկոմոտիվ» ֆուտբոլային ակումբի ազգային արտոնագիրը բավարար քանակի մանկապատանեկան թիմեր չունենալու պատճառով, իսկ «Յունիոր-Սևան» ակումբը չի ներկայացրել արտոնագրման համար անհրաժեշտ փաստաթղթային ամբողջական փաթեթները:

2019/2020 մրցաշրջանի ՈՒԵՖԱ-ի արտոնագիր ստանալու համար դիմել է 8 ակումբ: Բոլոր 8 ակումբներն էլ բավարարել են ՈՒԵՖԱ-ի արտոնագրի համար սահմանված չափանիշները և, հետևաբար, ստացել են 2019/2020 թթ. մրցաշրջանում եվրագավաթներում հանդես գալու իրավունք տվող արտոնագիր:

10 ԱԶԳԱՅԻՆ ԱՐՏՈՆԱԳԻՐ

8 ՈՒԵՖԱ-ի ԱՐՏՈՆԱԳԻՐ

2004-2019/2020 թթ. ՀՖՖ Ալբոմների ստացած և մերժված Ազգային արտոնագրեր



2009-2019/2020 թթ. ՀՖՖ Ակումբների ստացած և մերժված ՈՒԵՖԱ-ի արտոնագրեր



ՄԻ ՀԱՅԱՍՏԱՆ
ՄԻ ԼՈՒՌ

ԳԼՈՒԽ 2. ՀԱՃԱԽԵԼԻՈՒԹՅՈՒՆ

Հաճախելիություն

Անցկացնելով համեմատականներ 2017/2018 (38,150 հանդիսական) և 2018/2019 (57,690 հանդիսական) մրցաշրջանների ՀՀ Բարձրագույն խմբի առաջնության հաճախելիության ցուցանիշների միջև՝ ակնհայտ է դառնում, որ երկրպագուների ընդհանուր թիվն աճել է մոտավորապես 51,21 %-ով: 2018/2019 մրցաշրջանի հաճախելիության ցուցանիշը 2-րդն է վերջին 5 մրցաշրջան ներում: Այդ 5 մրցաշրջաններից ավելի բարձր հաճախելիություն (62,350 հանդիսական) արձանագրվել է միայն 2015/2016 մրցաշրջանի ընթացքում: Եթե հաշվի առնենք 2018/2019 մրցաշրջանի 1 խաղի միջին հաճախելիության ցուցանիշը (1 խաղին՝ միջինը 400 հանդիսական), ապա կտեսնենք, որ 2017/2018 մրցաշրջանի (1 խաղին՝ միջինը 423 հանդիսական) համեմատ այս ցուցանիշը նվազել է: Վերոնշյալից կարելի է եզրակացնել, որ ՀՀ ֆուտբոլի Բարձրագույն խմբի 2018/2019 մրցաշրջանի հաճախելիության աճը մեծամասամբ կապված է նախորդ մրցաշրջանի համեմատ թիմերի և խաղերի քանակի ավելացման հետ:

Սեփական հարկի տակ հանդիպումների ժամանակ երկրպագուների ամենամեծ բանակը ունեցել է Երևանի «Բանանց» ակումբը (ներկայումս՝ «Ուրարտու»), որի տնային հանդիպումներն այս տարի մարզադաշտից դիտել է 12,420 հանդիսական: Հատկանշական է, որ այս հաճախելիության ցուցանիշի հիմնական մասը բաժին է հասել 2 հանդիպման՝ «Բանանց»-«Արցախ» (4,000 հանդիսական) և «Բանանց»-«Արարատ-Արմենիա» (3,000 հանդիսական): Տնային հանդիպումներին ամենից քիչ հաճախելիություն է ունեցել «Գանձասար-Կապան» ակումբը՝ 3,600 հանդիսական: Սա հիմնականում պայմանավորված է այն հանգամանքով, որ Կապանը ներկայացնող թիմն արդեն մի քանի տարի է իր տնային հանդիպումներն անցկացնում է Երևանում: Ոչ շատ վաղ անցյալում՝ 2015/2016 մրցաշրջանում, «Գանձասար-Կապան»-ը հաճախելիության ցուցանիշով եղել է առաջատար (20,550 հանդիսական): Նախորդ մրցաշրջանի առաջատար Շիրակը զիջել է իր դիրքերը հաճախելիության ցուցանիշով՝ հայտնվելով 6-րդ տեղում: Գյումրեցիներին 2018/2019 մրցաշրջանում տնային խաղերի ժամանակ աջակցել է 5,750 հանդիսական, մինչդեռ 2017/2018 մրցաշրջանում աջակիցների թիվը հասել էր 7,870-ի:

2018/2019 թթ. մրցաշրջանում ՀՀ Առաջին խմբի առաջնության հաճախելիությունը փոքր-ինչ մեծացել է: 2017/2018 մրցաշրջանում այդ ցուցանիշը կազմել է 14630 ֆուտբոլասեր, մինչդեռ 2018/2019 մրցաշրջանում գրանցվել է 16525 հանդիսական: Մարզասերների թվաքանակի աճը հիմնականում պայմանավորված է մասնակից ակումբների քանակի ավելացմամբ: Ավարտված մրցաշրջանում Առաջին խմբում հանդես է եկել 11 թիմ:

Աճել է նաև ՀՀ Գավաթի 2018/19 թթ. խաղարկության հաճախելիության ցուցանիշը: Վերջինս 2017/18 թթ. կազմում էր 3770 երկրպագու, սակայն այս մրցաշրջանում այդ թիվը կրկնակի աճել է և կազմել 7930: ՀՀ Գավաթի 2018/19 թթ. խաղարկության հաճախելիության ցուցանիշի կեսից ավելին ապահովել է եզրափակիչ հանդիպումը, որին ներկա է եղել 4000 հանդիսական:

ՀՀ ֆուտբոլի 2014/2015թթ.-2018/2019 թթ.
Բարձրագույն խմբի առաջնությունների ակումբների հաճախելիության ցուցանիշներ



ՀՀ ֆուտբոլի 2014/2015թթ.-2018/2019 թթ.
Բարձրագույն խմբի առաջնության հաճախելիության ցուցանիշներ



ՀՀ ֆուտբոլի 2018/2019 թթ.
Բարձրագույն խմբի առաջնության ակումբների տնային հանդիպումների հաճախելիության ցուցանիշներ



ՀՀ ֆուտբոլի 2018/2019 թթ.
Առաջին խմբի առաջնության ակումբների հաճախելիության ցուցանիշներ



Ընդամենը՝ 14630 հանդիսական

ՀՀ ֆուտբոլի 2018/2019 թթ.
Գավաթի խաղարկության հաճախելիության ցուցանիշներ



Ընդամենը՝ 7930 հանդիսական

TASHIR
ARARAT
GOLD'S GYM
.COM

ԳԼՈՒԽ 3. ՖՈՒՏԲՈԼԻՍՆԵՐ ԵՎ ԼԵԳԻՈՆԵՐՆԵՐ

Ֆուտբոլիստներ և լեգիոներներ

Հաշվետվության այս հատվածում ներկայացված է ՀՀ Բարձրագույն խմբի առաջնության ֆուտբոլիստների տարիքային համեմատական վերլուծությունը:

ՀՀ ֆուտբոլի Բարձրագույն խմբի 2018/2019 թթ. առաջնությանը մասնակցել է (հայտավորված է եղել առնվազն առաջնության 1 խաղի) ընդհանուր 352 ֆուտբոլիստ: Առաջնությանը մասնակցած 352 ֆուտբոլիստներից 162-ը եղել են լեգիոներներ (ներառյալ ԵԱՏՄ երկրներից ֆուտբոլիստները): Նախորդ մրցաշրջանում ՀՀ Բարձրագույն խմբի առաջնությունում հանդես է եկել 70 լեգիոներ ֆուտբոլիստ: 2017/2018 մրցաշրջանի համեմատ՝ 2018/2019 մրցաշրջանում հանդես եկող ֆուտբոլիստների ընդհանուր քանակում ավելացել է նաև լեգիոներ ֆուտբոլիստների տեսակարար կշիռը՝ 27.67-%-ի փոխարեն կազմելով 46.02%: Հայտավորված արտասահմանցի ֆուտբոլիստների քանակով «Արարատ-Արմենիա» և «Լոռի» ակումբները եղել են առաջատար դիրքերում՝ ունենալով համապատասխանաբար 28-ական և 25-ական խաղացող: Ամենաքիչ քանակով լեգիոներներ (11) հանդես են եկել «Գանձասար-Կապան» ակումբում:

ՀՀ ֆուտբոլի Բարձրագույն խմբի 2018/2019 թթ. առաջնությանը մասնակցած ֆուտբոլիստների միջին տարիքը 25.02 է: Նախորդ առաջնությունում ֆուտբոլիստների միջին տարիքը 24.59 էր:

ՀՀ ֆուտբոլի Բարձրագույն խմբի 2018/2019 թթ. առաջնությանը մասնակցած թիմերից ամենաերիտասարդ կազմը ունեցել է «Լոռի» ՖԱ-ն: «Լոռի» ՖԱ-ի ֆուտբոլիստների միջին տարիքը 22,76 էր: 2018/2019 թթ. մրցաշրջանում «Լոռի» ՖԱ-ի կազմում հանդես է եկել մինչև 21 տարեկան 17 ֆուտբոլիստ:

ՀՀ ֆուտբոլի Բարձրագույն խմբի 2018/2019 թթ. առաջնության «ամենատարեց» թիմը Ալաշկերտ ՖԱ-ն էր: Ալաշկերտ ՖԱ-ի կազմում գերակշիռ մաս են կազմել 30 տարեկան և ավելի բարձր տարիք ունեցող ֆուտբոլիստները (14):

«Բանանց» և «Գանձասար-Կապան» ակումբները հանդես եկան տարիքային համեմատաբար հավասարակշռված կազմով՝ գրեթե հավասար քանակությամբ ֆուտբոլիստներ հայտավորելով մինչև 25 տարեկան տարիքային խմբում՝ համապատասխանաբար 15 և 17 ֆուտբոլիստ, 25-ից բարձր տարիքային խմբում՝ համապատասխանաբար 17 և 20 ֆուտբոլիստ:

«Փյունիկ», «Արարատ» և «Արցախ» ակումբները մեծամասամբ ապավինել էին մինչև 25 տարեկան ֆուտբոլիստներին: «Փյունիկ» ՖԱ-ի ֆուտբոլիստների միջին տարիքը կազմում է 24,67, «Արարատ» ՖԱ-ինը ՝ 24,51, «Արցախ» ՖԱ-ինը՝ 24,35:

Գյումրիի «Շիրակ»-ը ավարտված մրցաշրջանում նույնպես ուներ համեմամատաբար տարիքային հավասարակշռված կազմ: Ֆուտբոլիստների միջին տարիքը կազմել է 24,11:

ՀՀ ֆուտբոլի Բարձրագույն խմբի 2018/2019 թթ. առաջնության հաղթող «Արարատ-Արմենիա» ակումբի ֆուտբոլիստների միջին տարիքը ավարտված մրցաշրջանում կազմում էր 25,13:

ՀՀ ֆուտբոլի 2018/2019 թթ.
Բարձրագույն խմբի առաջնության ակումբների տարիքային ցուցանիշներ



ՀՀ ֆուտբոլի 2018/2019 թթ.
Բարձրագույն խմբի առաջնության ակումբներում հանդես եկած լեգիոներների քանակ



ՀՀ ֆուտբոլի 2014/2015-2018/2019 թթ.
Բարձրագույն խմբի առաջնության ակումբներում հանդես եկած ֆուբոլիստներ և լեգիոներներ



ԳԼՈՒԽ 4. ԵԿԱՄՈՒՏՆԵՐ ԵՎ ԾԱԽՍԵՐ

Եկամուտներ և ծախսեր

Համաձայն ՀՖՖ Ակումբների արտոնագրման կանոնակարգի՝ Բարձրագույն խմբի բոլոր ակումբների ֆինանսական հաշվետվությունները ենթարկվում են տարեկան պարտադիր աուդիտի, որի արդյունքները ներկայացվում են ՀՖՖ Արտոնագրման բաժին: Այս տարին էլ բացառություն չէր այդ տեսանկյունից:

Ֆինանսական չափանիշի պատշաճ իրագործումը պարտադիր պահանջ է՝ ՈՒԵՖԱ-ի մրցաշարերին մասնակցելու արտոնագիր ստանալու համար: 2019 թվականին Բարձրագույն խմբի 9 ակումբներից 8-ը դիմել են ՈՒԵՖԱ-ի մրցաշարերին մասնակցելու արտոնագիր ստանալու համար: Բոլոր 8 ակումբները բավարարել են վերոնշյալ չափանիշը՝ հնարավորություն ստանալով մասնակցելու 2019/2020 թվականների ՈՒԵՖԱ-ի կողմից կազմակերպվող ակումբային մրցաշարերին:

Ֆինանսական չափանիշի պահանջներին բավարարելու համար ակումբները պետք է ներկայացնեն հետևյալ հաշվետվությունները՝ ֆինանսական վիճակի, համապարփակ ֆինանսական արդյունքների, սեփական կապիտալում փոփոխությունների, դրամական հոսքերի վերաբերյալ, ինչպես նաև՝ սեփական աշխատակիցների, հարկային և սոցապ մարմինների և այլ ակումբների նկատմամբ ժամկետանց վճարումների բացակայության մասին հաշվետվություններ:

Ստացված տեղեկատվության ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ 2017 թվականի համեմատությամբ՝ 2018 թվականի հաշվետու տարում ՀՀ ակումբների ընդհանուր եկամուտները աճել են շուրջ 31,15%-ով: 2016 թվականի համեմատությամբ 2017 թվականին աճը կազմել էր 6,11%: 2018 թվականին ՀՀ ակումբների ընդհանուր ծախսերը նույնպես աճել են անհամեմատ մեծ ցուցանիշով՝ 54,21%-ով: Նախորդ տարում աճը կազմել էր 43,52 %: Ծախսերի կտրուկ աճը պայմանավորված է մի քանի գործոնով՝ Բարձրագույն խմբում ակումբների քանակի ավելացմամբ, աշխատավարձերի աճով և ավելի բարձրակարգ ֆուտբոլիստների ձեռքբերմամբ:

Հարկ է նշել, որ ակումբներից մի քանիսը եկամուտներ են ստացել հեռարձակման իրավունքներից: Սակայն, այդուհանդերձ, ակումբների հիմնական եկամտի աղբյուրը շարունակում է մնալ ՈՒԵՖԱ-ից ստացված պարգևավճարները և համերաշխության գումարները:

ՀՀ ֆուտբոլի 2018/2019 թթ. Բարձրագույն խմբի առաջնության ակումբների 2018թ. ֆինանսական տարվա ծախսեր (հազար ՀՀ դրամ)



ՀՀ ֆուտբոլի 2018/2019 թթ. Բարձրագույն խմբի առաջնության ակումբների 2018թ. ֆինանսական տարվա եկամուտներ (հազար ՀՀ դրամ)



ՀՀ ֆուտբոլի Բարձրագույն խմբի առաջնության ակումբների 2013-2018թթ. եկամուտների աճի դինամիկա



ՀՀ ֆուտբոլի 2018/2019 թթ. Բարձրագույն խմբի առաջնության ակումբների 2018թ. ֆինանսական տարվա հաշվապահական հաշվեկշիռ (հազար ՀՀ դրամ)



ԳԼՈՒԽ 5. ՁԵՌՔԲԵՐՈՒՄՆԵՐ

UNDER-17
CHAMPIONSHIP
ARMENIA 2019

Մ19 տարեկանների Եվրոպայի առաջնության եզրափակիչ փուլը Երևանում

2019 թվականի ՀՖՖ գլխավոր ձեռքբերումը կարելի է համարել բարձր մակարդակով անցկացված Եվրոպայի մինչև 19 տարեկանների առաջնության եզրափակիչ փուլը, որը տեղի ունեցավ հուլիսի 14-27-ը: Նման մակարդակի մրցաշար Հայաստանն անցկացնում էր առաջին անգամ, ինչն էլ ավելի է արժևորում մրցաշարի կազմակերպման վերաբերյալ ՈՒԵՖԱ-ի կողմից տրված բարձր գնահատականը:

Մրցաշարի հանդիպումները տեղի ունեցան Երևանի 3 մարզադաշտերում՝ Վազգեն Սարգսյանի անվան Հանրապետական, Բանանց և ՀՖՖ Ֆուտբոլի Ակադեմիա մարզադաշտերում: Մրցաշարը գրանցեց հաճախելիության բավականին բարձր ցուցանիշ՝ 52,180 հանդիսական:

Մրցաշարը կազմակերպվել է բավականին բարձր մակարադակով, անցել է առանց լուրջ խոտանների և ՈՒԵՖԱ-ի ներկայացուցիչների կողմից արժանացել է գերազանց գնահատականի:

Մրցաշարին՝ որպես ընդունող երկիր, մասնակցել է նաև Հայաստանի մինչև 19 տարեկանների հավաքականը: Չնայած նրան, որ մեր ֆուտբոլիստները ոչ մի հաղթանակ չեն տոնել մրցաշարում, այս մրցաշարը շատ մեծ փորձ է եղել երիտասարդ խաղացողների համար:

Մրցաշարի հաղթող է դարձել Իսպանիայի հավաքականը, որը եզրափակչում 2:0 հաշվով առավելության է հասել Պորտուգալիայի նկատմամբ:

2019 թ. Եվրոպայի մինչև 19 տարեկանների առաջնության եզրափակիչ փուլից առաջ և ընթացքում ՀՖՖ-ն կազմակերպել է մի շարք միջոցառումներ՝ իրական ֆուտբոլային տոն ապահովելով Հայաստանում.

- ✓ Մրցաշարի մեկնարկից 100 օր առաջ Երևանի կենտրոնում հանդիսավոր արարողությամբ ցուցադրվել է Մ19 տարեկանների Եվրոպայի առաջնության չեմպիոնական գավաթը, և տրվել է առաջնության հետհաշվարկի ժամացույցի մեկնարկը:
- ✓ Գավաթի ցուցադրությունից հետո մեկնարկել է չեմպիոնական գավաթի շրջագայությունը ՀՀ բոլոր մարզերով:
- ✓ Առաջնության մեկնարկից 90 օր առաջ Վաղարշապատի ֆուտբոլի ակադեմիայում տրվել է մասսայական ֆուտբոլի խոշոր մրցաշարի մեկնարկը, որը տևել է շուրջ 2 ամիս և ընդգրկել է ՀՀ բոլոր մարզերը:
- ✓ Առաջնության մեկնարկից 1 օր առաջ Երևանի կենտրոնում՝ Ազատության հրապարակում, բացվել է ֆուտբոլային ֆան-գոտի, որտեղ 15 օր շարունակ բոլոր ցանկացողները մասնակցել են տարբեր զվարճալի ֆուտբոլային խաղերի և խաղարկություն-ների:

ՀՀ մարզերում 40/20 մ չափի արհեստական խոտածածկով խաղադաշտերի կառուցում:

2018 թվականին ՀՖՖ-ն մշակեց նոր երկարաժամկետ խոշոր ծրագիր, այն է՝ 5 տարում ՀՀ բոլոր մարզերում կառուցել 20/40 մ չափերի արհեստական խոտածածկով 700 խաղադաշտ: Ծրագիրը իրականացվում է FIFA Forward ծրագրի շրջանակներում:

Ծրագրի նպատակը Հայաստանում մասսայական ֆուտբոլի զարգացումն է, ինչպես նաև հնարվորինս շատ մարդկանց ներգրավումը ֆուտբոլային ընտանիք: Խնդիր է դրված ՀՀ բոլոր համայնքներում անհրաժեշտ հարմարություններ ստեղծել ֆուտբոլ խաղալու համար: Ծրագրի առաջին փուլում կառուցվելու է 51 խաղադաշտ: Խաղադաշտերը կառուցվելու են Վայոց Ձորի (15 խաղադաշտ), Գեղարքունիքի (10 խաղադաշտ), Արարատի (1 խաղադաշտ), Տավուշի (13 խաղադաշտ) և Շիրակի (12 խաղադաշտ) մարզերում: Ընդ որում՝ Արարատի, Վայոց Ձորի և Գեղարքունիքի մարզերի խաղադաշտերի շինարարական աշխատանքները մեկնարկել են, դրանցից որոշներն էլ՝ արդեն ավարտին հասցվել, իսկ Տավուշի և Շիրակի մարզերի խաղաշտերի կառուցման շինարարական աշխատանքները սկսվելու են 2019 թվականի աշնանը: Խաղադաշտերի կառուցման տեղադիրքերը ընտրվել են ՀՖՖ կողմից կատարված սոցհարցումների, մոնիթորինգների և վերլուծությունների հիման վրա:

Համագործակցության նոր պայմանագիր Macron ընկերության հետ

Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիան ստորագրել է համագործակցության նոր պայմանագիր իտալական Macron ընկերության հետ: 2020 թ. հունվարի 1-ից Macron ընկերությունը պաշտոնապես դառնալու է ՀՖՖ տեխնիկական հովանավորը: Պայմանագիրը նախատեսված է մինչև 2023 թ. դեկտեմբերի 30-ը:

Պայմանագրի համաձայն 2020 թվականից Macron ընկերությունը մարզագույք կմատակարարի Հայաստանի ազգային և բոլոր տարիքային հավաքականներին, ինչպես նաև ֆուտզալի և կանանց հավաքականներին:

ՀՖՖ և Macron ընկերության միջև հաստատված համագործակցությունը խթան կհանդիսանա նաև ՀՖՖ մերչենդայզինգային նոր քաղաքականության իրականացման համար:

macron®
TECHNICALSPORTSWEAR

ԳԼՈՒԽ 6. ՍԵՄԻՆԱՐՆԵՐ ԵՎ ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ

FIFA

2018/2019 թթ. մրցաշրջանի ընթացքում ՀՖՖ Արտոնագրման բաժնի կողմից կազմակերպվել են մի շարք հանդիպումներ և սեմինարներ, որոնց հիմնական նպատակն էր ակումբներին ծանոթացնել արտոնագրման գործընթացին, ներկայացնել նորամուծությունները և քննարկել առկա խնդիրներն ու բացթողումները: ՀՖՖ Արտոնագրման բաժնի կողմից կազմակերպած սեմինար-հանդիպումներին մասնակցել են և՛ ՀՖՖ Բարձրագույն խմբի, և՛ Առաջին խմբի առաջնությունների մասնակից ակումբները:

Ճանաչողական հանդիպում ՀՖՖ ակումբների ներկայացուցիչների հետ արտոնագրման 2019/2020 թթ. մրցաշրջանի վերաբերյալ (21.12.2018 թ.)

ՀՖՖ ակումբների արտոնագրման ներկայացուցիչների հետ ճանաչողական հանդիպմանը մասնակցել են 2019/2020թթ. արտոնագրման մրցաշրջանին մասնակցելու հայտ ներկայացրած բոլոր ակումբների ներկայացուցիչները (12 ակումբ): Հանդիպմանը ներկայացվել է ՀՖՖ Արտոնագրման բաժնի քաղաքականությունը, բաժնի առջև դրված նպատակային խնդիրները: Հանդիպման մասնակիցներին ներկայացվել է նաև նոր հրատարակված ՀՖՖ Ակումբների արտոնագրման կանոնակարգը (2018թ. խմբագրություն) և մանրամասն քննարկվել դրանում տեղ գտած բազմաթիվ բովանդակային փոփոխությունները՝ նախորդ տարվա կանոնակարգի հետ համեմատ:

ՏՀՀ Սեմինար (14.12.2018 թ.)

ՖԻՖԱ-ի Տրանսֆերների Համադրման Համակարգի (ՏՀՀ) սեմինար-հանդիպմանը մասնակցել են ՀՖՖ Բարձրագույն և Առաջին խմբերի առաջնությունների մասնակից ակումբների ՏՀՀ պատասխանատուները: Սեմինարը նվիրված է եղել ՏՀՀ համակարգում տեղ գտած փոփոխությունների ու նորամուծությունների ներկայացմանը, ակումբների ՏՀՀ պատասխանատուների վերապատրաստմանը, ինչպես նաև միջազգային տրանսֆերների իրականացման գործընթացի առանձնահատկությունների ուսումնասիրությանը և ՏՀՀ համակարգի վերաբերյալ գիտելիքների ամրապնդմանը:

Սեմինարի ընթացքում ակումբների ներկայացուցիչներին փոխանցվել է 2018թ.-ին Շվեյցարիայի Ցյուրիխ քաղաքում կայացած ՖԻՖԱ ՏՀՀ սեմինարի ընթացքում ձեռք բերված տեղեկատվությունն ու նորամուծությունները, ինչպես նաև ՏՀՀ համակարգի գործառույթներին նվիրված հատուկ ուղեցույցները:

Ակումբների արտոնագրման ֆինանսական չափանիշի վերաբերյալ սեմինար (20.03.2019 թ.)

ՀՖՖ Արտոնագրման բաժնի կողմից կազմակերպած ֆինանսական չափանիշի վերաբերյալ սեմինար-հանդիպմանը մասնակցել են ՀՀ Բարձրագույն խմբի ակումբների ֆինանսական և արտոնագրման պատասխանատուները: Սեմինարը նվիրված էր 2019/2020 թվականների արտոնագրման մրցաշրջանի ֆինանսական չափանիշին:

Հանդիպմանը հեռահար կապի միջոցով մասնակցել են նաև ՈՒԵՖԱ-ի ակումբների արտոնագրման և ֆինանսական արդար խաղի մասնագետներ Անժելա Ղազարյանը և Անդրե Գլուրը, ովքեր վեբինարի միջոցով մասնակիցներին ծանոթացրել են Ակումբների արտոնագրման ֆինանսական չափանիշի առկա խնդիրներին և ոլորտում կատարված փոփոխություններին ու մարտահրավերներին:

Հանդիպման ընթացքում ներկայացվել են ՈՒԵՖԱ-ի Ակումբների արտոնագրման և արդար խաղի կանոնակարգի ֆինանսական չափանիշի բոլոր դրույթները, ինչպես նաև մանրամասն ներկայացվել են ՀՖՖ Արտոնագրման կանոնակարգի բոլոր առանձնահատկությունները:

Մամուլի քարտուղարների սեմինար (30.04.2019 թ.)

ՀՖՖ Արտոնագրման և Հասարակայնության հետ կապերի և լրատվության բաժինների կողմից կազմակերպած սեմինար-հանդիպմանը մասնակցել են ՀՀ Բարձրագույն և Առաջին խմբերի առաջնությունների մասնակից ակումբների մամուլի պատասխանատուները: Սեմինարի ընթացքում ներկայացվել է 2018 թ. հոկտեմբեր ամսից մինչև 2019 թ. ապրիլ ընկած ժամանակահատվածում ՀՖՖ գործունեությունը, ուղղվածության փոփոխությունը և ձեռքբերումները մեդիա դաշտում: Հաջորդիվ, քննարկվել են ակումբների պաշտոնական կայքերի և սոց.ցանցերի վարման քաղաքականությունն ու ուղղվածությունը, PR ռազմավարությունը, հետխաղային մամուլի ասուլիսնե-

րի ընթացքում ակումբների պարտավորությունները, ՀՖՖ-ակումբներ հարաբերությունները և այլն: Սեմինարն անցկացվել է ինտերակտիվ քննարկման ձևաչափով:

Սեմինարին մասնակցած մամուլի պատասխանատուներին ՀՖՖ Արտոնագրման և Հասարակայնության հետ կապերի և լրատվության բաժինների կողմից հանձնվել են դասընթացին մասնակցությունը հաստատող հավաստագրեր, որոնք կթույլատրեն նշված անձանց զբաղեցնել ակումբներում մամուլի քարտուղարի պաշտոնը:

Անվտանգության պատասխանատուների սեմինար (21.03.2019 թ.)

ՀՖՖ Արտոնագրման և Անվտանգության բաժինների կողմից կազմակերպած սեմինար-հանդիպմանը մասնակցել են ՀՀ Բարձրագույն և Առաջին խմբերի առաջնությունների մասնակից ակումբների անվտանգության պատասխանատուները: Սեմինարի ընթացքում մասնակիցներին ներկայացվել են խաղերի ժամանակ անվտանգության ապահովման առկա խնդիրները, մշակվող կանոնակարգերի էությունը և 2019/2020թթ. ՀՀ Բարձրագույն խմբի առաջնության խաղերի անվտանգության ապահովմանն ուղղված միջոցառումներն ու փոփոխությունները:

Սեմինարին մասնակցած ակումբի ներկայացուցիչներին ՀՖՖ Արտոնագրման և Անվտանգության բաժինների կողմից հանձնվեցին դասընթացին մասնակցությունը հաստատող հավաստագրեր, որոնք կթույլատրեն նշված անձանց զբաղեցնել ակումբներում անվտանգության պատասխանատուի պաշտոնը:

CAFE
CENTRE FOR ACCESS TO FOOTBALL IN EUROPE
ՖՈՒՏԲՈԼԸ ԲՈԼՈՐԻ ՀԱՄԱՐ
CAFE Week of Action
www.cafefootball.eu

ԳԼՈՒԽ 7. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՆԱԽԱԳԾԵՐ

ՀՖՖ Արտոնագրման բաժինը ՈՒԵՖԱ-ի ՀեթՏրիկ (Hattrick) ծրագրի շրջանակներում՝ համագործակցելով CAFÉ և SD Europe ընկերությունների հետ, իրականացրել է մի շարք սոցիալականմիջոցառումներ:

Դավիթը՝ ֆուտբոլային մեկնաբան

ՀՖՖ Արտոնագրման բաժնի նախաձեռնությամբ և ՀՖՖ օժանդակությամբ Դավիթ Սարգսյանը սովորել է ՊանԱրմենիան Մեդիա Գրուպի մարզական մեկնաբանների դպրոցում և ստացել մարզական մեկնաբանի որակավորում: ՀՖՖ աջակցությամբ Դավիթը հնարավորություն է ունեցել նաև ուղիղ եթերում մեկնաբանելու Հայաստանի Բարձրագույն Խմբի առաջնության հանդիպում:

Ֆուտբոլային հանդիպում հաշմանդամություն ունեցող երեխաների և Հայաստանի հավաքականի ֆուտբոլիստների մասնակցությամբ

ՀՖՖ-ն և «ՓԻՓԼ» խնամքի ծառայություն ընկերությունը համատեղ կազմակերպել էին ֆուտբոլային խաղ, որին մասնակցում էին հաշմանդամություն ունեցող երեխաները և Հայաստանի ազգային հավաքականի ֆուտբոլիստներ Տիգրան Բարսեղյանը, Արտակ Եդիգարյանը, Ռումյան Հովսեփյանը, Արթուր Քարտաշյանը և նախկին ֆուտբոլիստ Ռոբերտ Արզումանյանը:

Ֆուտբոլային հանդիպում երկրպագուների և զինծառայողների միջև

2019 թվականի հունվարի 28-ին Հայոց բանակի կազմավորման 27-րդ տարեդարձի կապակցությամբ ՀՖՖ Արտոնագրման բաժնի նախաձեռնությամբ Իջևանի «Արնար» մարզադաշտում տեղի էր ունեցել ֆուտբոլային հանդիպում, որի շրջանակներում միմյանց հետ մրցել են ՊՆ ենթակայության տակ գտնվող Իջևանի զորամասի զինվորները և «Առաջին հայկական ճակատ» երկրպագուական շարժման անդամները:

Հանդիպումից հետո ՀՖՖ ներկայացուցիչները և երկրպագուները այցելել են զորամաս, շփվել զինվորների և հրամանատարության հետ: Վերջում ՀՖՖ ներկայացուցիչները զինվորներին նվերներ են հանձնել: Միջոցառման հիմնական նպատակը զինվորների հետ միասին Հայոց բանակի օրը նշելն ու վերջիններիս բանակային առօրյայից մի քանի ժամով կտրելն է եղել:

Ֆուտբոլային առաջնություն երկրպագուական շարժումների միջև

2019 թվականի մայիս ամսին մեկնարկել է ՀՖՖ Արտոնագրման բաժնի կողմից նախաձեռնած սիրողական ֆուտբոլի մրցաշար, որին մասնակցել են Հայաստանի հավաքականի և հայկական ակումբների երկրպագուական շարժումները: Առաջնության նպատակն էր Հայաստանում սիրողական ֆուտբոլի և երկրպագուական շարժումների զարգացմանը նպաստելը:

Առաջնությանը մասնակցել է 6 թիմ, որոնք որոշել են հաղթողին շուրջ 1 ամիս տևած պայքարում: Առաջնության հանդիպումները տեղի են ունեցել Երևանում՝ ՀՖՖ Տեխնիկական կենտրոն/Ակադեմիայում, «Բանանց» մարզաբազայում, «Փյունիկ» մարզաբազայում և Վանաձորում («Վանաձորի ֆուտբոլի ակադեմիա»):

Հեղինակ՝

Արսեն Զաքարյան	**ՀՖՖ Արտոնագրման բաժնի մասնագետ**

«ՀՖՖ ԱԿՈՒՄԲՆԵՐԻ ԱՐՏՈՆԱԳՐՄԱՆ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ 2019»-ի ստեղծմանը նպաստել են՝

Վահան Բերակչյան	**ՀՖՖ Արտոնագրման բաժնի պետ**
Նաիրա Աբրամյան	**ՀՖՖ Արտոնագրման բաժնի ավագ մասնագետ**
Նունե Սարգսյան	**ՀՖՖ Արտոնագրման բաժնի մասնագետ**

Լուսանկարներ՝

Հակոբ Բերբերյան

Շապիկի լուսանկարներ՝

Գևորգ Ղազարյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՒՏԲՈԼԻ ՖԵԴԵՐԱՑԻԱ
Արտոնագրման բաժին

Հասցե՝	Խանջյան 27, Երևան, 0010, Հայաստան
Հեռ.՝	+37411888808
Էլ. փոստ՝	licensing@ffa.am
Կայք՝	www.ffa.am